ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 01 » .փետրվարի 2017 թ. N 20 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N 13-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայկական միրգ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդ ստեղծելու մասին» N 13-Ա հրամանի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« 1.Ստեղծել ընկերության տնօրենների խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ) հետևյալ կազմով՝

Աշոտ Հարությունյան	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Հրայր Եսայան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության գյուղատնտեսության, սննդամթերքի անվտանգության, բնապահպանության և ջրային տնտեսության ոլորտներում բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ)

Արամ Օհանյան	Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարչության պետ (համաձայնությամբ)
Հայկ Միրզոյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի արտահանման տնօրինության տնօրեն (համաձայնությամբ)
Վարդան Համբարձումյան	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ
Կարապետ Հակոբյան	«Ծիրանուտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն (համաձայնությամբ)
Միքայել Լազարյան	«Ռոյալ Գլաս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գյուղատնտես (համաձայնությամբ)
Գնել Մխիթարյան	«Ագրոինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գյուղատնտես (համաձայնությամբ)
Հրաչյա Հարությունյան	«Փոքր այգի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն (համաձայնությամբ)

»:

ՆԱԽԱՐԱՐ Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ